

ՊԵԿԻՆՅԱՆ ՀՌՎԱԿԱԳԻՐ

(15 սեպտեմբերի, 1995 թ.)

- Սենք՝ Կանանց դրության վերաբերյալ չորրորդ հանաշխարհային խորհրդաժողովի մասնակից կառավարություններս,
- Հավաքվելով այստեղ՝ Պեկինում, 1995 թ. սեպտեմբերին, Միավորված ազգերի կազմակերպության հիմնադրման հիսունամյա տարեդարձի տարին,
- Տոգորված ամուր ՎՃՌԱԿԱՆՈՒԹՅԱՄԲ՝ հասնելու աշխարհի բոլոր կանանց համար հավասարության, զարգացման և խաղաղության նպատակներին՝ հանուն համայն մարդկության շահերի,
- Հաշվի առնելով աշխարհի բոլոր կանանց ակնկալիքները և ուշադրության առնելով կանանց և նրանց դերերի ու հանգամանքների բազմազանությունը, արժանին մատուցելով այն կանանց, որոնք ճանապարհ են հարթել, և ներշնչված այն հույսով, որի մարմնավորումն է աշխարհի երիտասարդությունը,
- Ընդունում ենք, որ վերջին տասնամյակում կանանց դրությունը շատ կողմերով էապես բերալավվել է, բայց այդ առաջընթացն անհամաշափ է եղել, և տղամարդկանց ու կանանց անհավասարությունը նախկինի պես գոյություն ունի, հիմնական խոչընդոտները պահպանվում են, ինչը լրջորեն անդրադառնում է բոլոր մարդկանց բարեկեցության վրա,
- Ընդունում ենք, որ այդ իրավիճակը խորանում է աղքատության զորացմանք, որն ազդում է աշխարհի մարդկանց մեծ մասի, մանավանդ կանանց և երեխաների կյանքի վրա, և դրա ծագումը պետք է որոնել ինչպես ներպետական, այնպես էլ միջազգային ոլորտներում,
- Հայտարարում ենք մեր անվերապահ նվիրվածությունն այդ սահմանափակումների ու խոչընդոտների վերացման գործին և այդպիսով կանանց վիճակի բարելավմանն ամբողջ աշխարհում ու նրանց հնարավորությունների ընդլայնմանը և համաձայնում ենք, որ դա այսօր արդեն անհետաձգելի միջոցառումների ձեռնարկում է պահանջում՝ ՎՃՌԱԿԱՆՈՒԹՅԱՆ, հույսի, համագործակցության և համերաշխության ոգով, որպեսզի նոր ձեռքբերումներով ոտք դնենք հաջորդ հարյուրամյակ:
- Մենք հաստատում ենք մեր կողմնակցությունը.
- Տղամարդկանց և կանանց իրավահավասարությանը և բնատուր մարդկային արժանապատվությանը, ինչպես նաև Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրությունում, Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում և մարդու իրավունքների ոլորտի ուրիշ փաստաթղթերում, մասնավորապես Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին և Երեխայի իրավունքների մասին կոնվենցիաներում, ինչպես նաև Կանանց նկատմամբ բռնության վերացման մասին և Զարգացման իրավունքի մասին հռչակագրերում հռչակված նպատակներին ու սկզբունքներին.

**ՀԿԿԱ - ԿԱՆԱԳ ԵՎ ՏՈԱՄԱՐԴԿԱՆՑ ԻՐԱՎԱԿԱՎԱՍԱՐՈՒԹՅՈՒՆ, ՄԻՋԱՋՋԱՀԻՆ ԻՐԱՎԱԿԱՄ ՎԻԱՍՏՈՎՐՔԵՐԻ, ՀՀ
ՕՐԵՆՔՆԵՐԻ Կ ՕՐԵՆՄՈՐԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ, ԵՐՆԱՅ 2006**

9. Կանաց և աղջիկների մարդու իրավունքների՝ որպես մարդու համընդիանուր իրավունքների և հիմնական ազատությունների անքակտելի, բաղկացուցիչ և անբաժանելի մասի, լիակատար իրականացման ապահովմանը.

10. Այս կոնսենսուսի և առաջընթացի օրգագումանը, որոնք ձեռք են բերվել Միավորված ազգերի կազմակերպության՝ բարձր մակարդակի խորհրդաժողովներում ու հանդիպումներում (կանաց դրության բարելավման՝ Նայրոբիում 1985 թ., Երեխաների՝ Նյու Յորքում 1990 թ., շրջակա միջավայրի և զարգացման՝ Ռիո դե Ժանեյրոյում 1992 թ., մարդու իրավունքների՝ Վիեննայում 1993 թ., ազգաբնակչության և զարգացման՝ Կահիրեում 1994 թ. և սոցիալական զարգացման՝ Կոպենհագենում 1995 թ.)՝ հավասարության, զարգացման և խաղաղության հասնելու նպատակով.

11. Կանաց դրության բարելավման ոլորտում Նայրոբիի հեռանկարային ռազմավարությունների լիակատար և արդյունավետ ապահովմանը.

12. Կանաց հնարավորությունների ընդլայնմանը և դրության բարելավմանը, ներառյալ մտքի, խղճի, դավանանքի և համոզմունքների իրավունքն ու ազատությունը, նպաստելով այդպիսով տղամարդկանց և կանաց բարոյական, էթիկայի, հոգևոր և մտավոր պահանջմունքների բավարարմանը՝ անհատապես կամ ուրիշ խնբերի հետ միասին, և դրա միջոցով հնարավորության երաշխիք տալով նրանց լիովին իրացնելու սեփական ներուժը հասարակության մեջ իրենց կյանքը սեփական սպասումներին համապատասխան ձևավորելիս:

Մենք համոզված ենք, որ

13. Կանաց հնարավորությունների ընդլայնումը և հավասարության հիման վրա նրանց համակողմանի մասնակցությունը հասարակության կյանքի բոլոր ոլորտներին, ներառյալ մասնակցությունը որոշումների կայացման գործընթացին և մուտքը իշխանություն, հիմնարար նշանակություն ունեն հավասարության, զարգացման և խաղաղության նպատակներին հասնելու համար.

14. Կանաց իրավունքները մարդու իրավունքներ են.

15. Հավասար իրավունքները, հնարավորությունները և ռեսուրսների մատչելիությունը, տղամարդկանց և կանաց միջև ընտանեկան պարտականությունների հավասար բաշխումը և ներդաշնակ գործընկերությունն առանցքային նշանակություն ունեն իրենց և իրենց ընտանիքների բարեկեցության, ինչպես նաև ժողովրդավարության ամրապնդման համար.

16. Կայուն տնտեսական աճի, սոցիալական զարգացման, շրջակա միջավայրի պահպանության և սոցիալական արդարության հիման վրա աղքատության վերացումը պահանջում է կանաց ընդգրկում տնտեսական և սոցիալական զարգացման մեջ, կանաց և տղամարդկանց՝ որպես շարժիչ ուժերի և դեպի մարդիկ կողմնորոշված կայուն զարգացման շահառուների, հավասար հնարավորություններ և լիակատար ու հավասարաչափ մասնակցություն.

17. Կանաց՝ սեփական առողջության բոլոր հայեցակետերի, մասնավորապես սեփական վերաբերության վերահսկողության իրավունքի հստակ ընդունումն ու հաստատումը հիմնարար նշանակություն ունեն նրանց հնարավորությունների ընդլայնման համար.

18. Խաղաղությունը տեղական, տարածաշրջանային և համընդիանուր մակարդակներում հասանելի է և անխօնական կապված է կանաց դրության բարելավման հետ, որ

**ՀԿԿՍ - ԿԱՆԱՏ ԵՎ ՏՈԱՄԱՐԴԿԱՆՑ ԻՐԱՎԱԿԱԿԱՍՍԱՐՈՒԹՅՈՒՆ, ՄԻՋԱՋՋԱՀԻՆ ԻՐԱՎԱԿԱՄ ՎԻԱՍՏՈՎՐՔԵՐԻ, ՀՀ
ՕՐԵՆՔՆԵՐԻ Կ ՕՐԵՆՄՈՐԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԺՊՂՎԱԾՈՒ, ԵՐՆԱՅ 2006**

կարևորագույն ուժ է կոնֆիլիկտների կառավարման ու կարգավորման և բոլոր մակարդակներում ամուր խաղաղության հաստատման օժանդակության գործում.

19. Կանանց համաշխարհային մասնակցությամբ անհրաժեշտ է մշակել, իրականացնել գործուն, արդյունավետ և փոխլրացնող ու գենդերային հայցակետերը հաշվի առնող ռազմավարություններ ու ծրագրեր, ներառյալ քաղաքականությունն ու ծրագրերը զարգացման ոլորտում, որոնք կապաստեն կանանց իրավունքների ընդլայնմանը և դրության բարելավմանը.

20. Քաղաքացիական հասարակության բոլոր ուժերի, մասնավորապես կանանց խմբերի և ցանցային կառույցների և ուրիշ ոչ կառավարական ու համայնքային կազմակերպությունների մասնակցությունն ու ներդրումը, նրանց ինքնուրույնության հարգման և կառավարության հետ համագործակցության պարագայում, կարևոր պայման են Գործողությունների ծրագրի հաջող իրականացման և դրա հետ կապված հետագա գործունեության համար.

21. Գործողությունների ծրագրի իրականացումը պահանջում է պարտավորությունների ստանձնում կառավարությունների և միջազգային հանրության կողմից: Կառավարությունները և միջազգային հանրությունը՝ գործնական միջոցառումներին առնչվող իրենց ազգային և միջազգային պարտավորություններով, ներառյալ խորհրդաժողովում ստանձնած պարտավորությունները, ընդունում են կանանց հնարավորությունների ընդլայնման և դրության բարելավման անհապաղ միջոցառումների անհրաժեշտությունը:

ՄԵՆՔ ԼԻ ԵՆՔ ՎՃՌԱԿԱՆՈՒԹՅԱՆԲ՝

22. Ներկա հարյուրամյակի վերջում ակտիվացնելու ջանքերը և գործնական աշխատանքը կանանց դրության բարելավման ոլորտում նայրոբյան հեռանկարային ռազմավարությունների նպատակներին հասնելու համար.

23. Հնարավորություն ապահովելու կանանց և աղջիկների համար՝ լիովին օգտվելու մարդու բոլոր իրավունքներից ու իիմնական ազատություններից և գործուն միջոցներ ձեռնակելու այդ իրավունքների ու ազատությունների խախտումների դեմ.

24. Ձեռնարկելու բոլոր անհրաժեշտ միջոցները կանանց և աղջիկների նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման, տղամարդկանց ու կանանց միջև հավասարության հասնելու բոլոր խոչընդոտները վերացնելու և կանանց դրության բարելավման ու նրանց հնարավորությունների ընդլայնման ուղղությամբ.

25. Հասնելու տղամարդկանց համակողմանի մասնակցությանը հավասարության հասնելու բոլոր ջանքերին.

26. Աջակցելու կանանց տնտեսական անկախության հասնելու գործում, ներառյալ զբաղվածությունը, և վերջ դնելու աղքատության անընդհատ և հարածուն ծանրությանը, որ կրում են կանայք տնտեսական կառույցների վերափոխման, բոլոր, այդ թվում և գյուղական շրջաններում ապրող կանանց՝ որպես զարգացման կարևոր մասնակիցների, արտադրական ռեսուրսների, հնարավորությունների և պետական ծառայությունների հավասար մատչելիություն ընձեռելու հիման վրա.

27. Խրախուսելու մարդուն ուղղված կայուն զարգացումը, ներառյալ անշեղ տնտեսական աճը, կանանց և աղջիկներին բազային կրթության, անընդհատ կրթության, գրագիտության և մասնագիտական պատրաստության և առաջնային բժշկա-սանհտարական օգնության հնարավորություն ընձեռելու հիման վրա.

28. Դրական քայլեր ձեռնարկելու խաղաղության հաստատման ուղղությամբ՝ ելնելով կանանց դրության բարելավման շահերից, ընդունելով այն առաջատար դերը, որ ունեցել են

**ՀԿԿՍ - ԿԱՆԱԳ ԵՎ ՏՈԱՄԱՐԴԿԱՆՑ ԻՐԱՎԱԿԱԿԱՍԱՐՈՒԹՅՈՒՆ, ՄԻՋԱՋՋԱՀԻՆ ԻՐԱՎԱԿԱՄ ՎԻԱՍՏՈՎՐՔԵՐԻ, ՀՀ
ՕՐԵՆՔՆԵՐԻ Կ ՕՐԵՆՄՈՐԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ, ԵՐՆԱՅ 2006**

կանայք հանուն խաղաղության շարժման մեջ, ակտիվություն հասնելու համընդիանուր և լիակատար զինաթափման միջազգային խիստ և արդյունավետ հսկողության պայմաններում և աջակցելու միջուկային փորձարկումների համապարփակ արգելման մասին համընդիանուր և արդյունավետ հսկողության ենթակա համաձայնագրի անհետաձգելի կնքման շուրջ բանակցությունները, որը կնպաստի միջուկային զինաթափմանը և միջուկային գենքի տարածման կանխարգելմանը բոլոր առումներով.

29. Կանխելու և վերացնելու կանանց և աղջիկների նկատմամբ բռնության բոլոր ձևերը.
30. Ապահովելու կանանց և տղամարդկանց համար կրթության և բժշկական օգնության հավասար մատչելիություն և հավասար վերաբերմունք նրանց նկատմամբ այդ ոլորտներում և հասնելու կանանց սեռական ու վերատադրողական առողջության լիակատար բարելավման, ինչպես նաև նրանց կրթական մակարդակի բարձրացման.
31. Խրախուսելու և պաշտպանելու կանանց և երեխաների մարդու բոլոր իրավունքները.
32. Զանքեր գործադրելու այն բոլոր կանանց և երեխաներին մարդու իրավունքների և հիմնական ազատությունների ամբողջությունից օգտվելու հնարավորության ընձեռնան համար, որոնք բախվում են իրենց իրավունքների ընդլայնումը և դրության բարելավումը խոչընդոտող համալիր արգելքների այնպիսի գործուների պատճառով, ինչպիսիք են ռասայական պատկանելությունը, տարիքը, լեզուն, էթնիկ պատկանելությունը, մշակույթը, կրոնը կամ անհատականությունը և կամ պատկանելությունը բնիկ ժողովրդին.
33. Ապահովելու միջազգային իրավունքի հարգումը, ներառյալ մարդասիրական իրավունքը՝ ելնելով առաջին հերթին կանանց և աղջիկների պաշտպանության շահերից.
34. Հասնելու բոլոր տարիքների կանանց և աղջիկների ունակությունների առավելագույն զարգացմանը, ապահովելու նրանց համակողմանի և հավասար մասնակցությունը բոլորի համար ավելի կատարյալ աշխարհ կառուցելուն և բարձրացնելու նրանց դերը զարգացման գործընթացում:

ՄԵՆՔ ԼԻ ԵՆՔ ՎՃՌԱԿԱՆՈՒԹՅԱՄԲ

35. Ապահովելու կանանց համար տնտեսական ռեսուրսների հավասար մատչելիությունը (ներառյալ հողը, վարկերը, գիտությունը և տեխնիկան, մասնագիտական պատրաստությունը, տեղեկատվությունը, հաղորդակցության միջոցները և շուկաները)` որպես կանանց և աղջիկների դրության հետագա բարելավման միջոցներից մեկը, այդ թվում տվյալ ռեսուրսների հավասար մատչելիության ապահովման հետ կապված բարիքներից օգտվելու հնարավորության ընդլայնման հաշվին և մասնավորապես միջազգային համագործակցության միջոցով:

36. Ապահովելու Գործողությունների ծրագրի հաջող իրականացումը, որի համար կպահանջվի կառավարությունների, միջազգային կազմակերպությունների և բոլոր մակարդակների հաստատությունների վճռական կողմնակցությունը: Մենք վստահաբար համոզված ենք, որ տնտեսական զարգացումը, սոցիալական զարգացումը և շրջակա միջավայրի պահպանությունը կայուն զարգացման փոխկապակցված և փոխլրացնող բաղադրիչներ են՝ ներկայացնելով բոլոր մարդկանց կյանքի որակի բարձրացմանն ուղղված մեր ջանքերի հիմքը: Արդար սոցիալական զարգացումը, որի շրջանակներում աղքատության պայմաններում ապրող չուներներին, մանավանդ կանանց վերապահվում է էկոլոգիական ռեսուրսներից մշտապես օգտվելու իրավունքը, համարվում է կայուն զարգացման անհրաժեշտ հիմքը: Մենք ընդունում ենք նաև, որ մշտական հիմքի վրա սոցիալական

**ՀԿԿՍ - ԿԱՆԱԳ ԵՎ ՏՈԱՄԱՐԴԿԱՆՑ ԻՐԱՎԱԿԱՎԱՍԱՐՈՒԹՅՈՒՆ, ՄԻՋԱՋՋԱՀԻՆ ԻՐԱՎԱԿԱՄ ՎԻԱՍՏՈՎՐՔԵՐԻ, ՀՀ
ՕՐԵՆՔՆԵՐԻ Կ ՕՐԵՆՄՈՐԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ, ԵՐՆԱՅ 2006**

գարգացման և սոցիալական արդարության աջակցության համար անհրաժեշտ է համընդգրկուն և անընդհատ տնտեսական աճ կայուն զարգացման համատեքստում: Գործողությունների ծրագրի հաջող իրականացման համար նաև կպահանջվի ռեսուրսների պատշաճ համախմբում ազգային և միջազգային մակարդակներում, ինչպես նաև նոր և լրացուցիչ ռեսուրսներ զարգացող երկրների համար՝ ընդգրկելով բոլոր ֆինանսական մեխանիզմները (ներառյալ բազմակողմ, երկկողմ և մասնավոր աղբյուրները) կանանց դրության բարելավման նպատակով, ֆինանսական ռեսուրսներ ազգային, ենթատարածաշրջանային, տարածաշրջանային և միջազգային հաստատությունների ներուժը ամրապնդելու համար, նվիրվածություն հավասար իրավունքների, հավասար պարտականությունների և հավասար հնարավորությունների ապահովման գործին, ինչպես նաև կողմնակցություն բոլոր ազգային, տարածաշրջանային և միջազգային մարմիններում և քաղաքականության ձևավորման գործընթացներում տղանարդկանց և կանանց իրավահավասար մասնակցությանը, վերջապես աշխարհի կանանց առջև հաշվետվության ապահովման բոլոր մակարդակների մեխանիզմների ստեղծում ու ամրապնդում:

37. Ապահովելու նաև Գործողությունների ծրագրի հաջող իրականացումը անցումային տնտեսությամբ երկրներում, որի համար կպահանջվեն հետագա միջազգային համագործակցություն և օգնություն:

38. Սույնով ընդունում ենք և որպես կառավարություններ՝ պարտավորվում ենք կատարել ստորև ներկայացվող Գործողությունների ծրագիրը՝ հետևելով, որ գենդերային հայեցակետերն արտացոլում գտնեն մեր բոլոր ռազմավարություններում ու ծրագրերում: Մենք Միավորված ազգերի կազմակերպության համակարգին, տարածաշրջանային և միջազգային ֆինանսական հաստատություններին, ուրիշ համապատասխան տարածաշրջանային և միջազգային հաստատություններին և բոլոր կանանց ու տղանարդկանց, ինչպես նաև ոչ կառավարական կազմակերպություններին և քաղաքացիական հասարակության բոլոր սեկտորներին, միանգամայն հարգելով նրանց ինքնուրույնությունը, հաստատակամորեն կոչ ենք անուն կառավարությունների հետ համագործակցությամբ ստանձնել Գործողությունների ծրագրի իրականացման պարտավորությունները և համակողմանիորեն աջակցել որան:

ՊԵԿԻՆՅԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

(15 սեպտեմբերի, 1995 թ.)

(Քաղաքածներ)

Գլուխ I

Նպատակի շարադրանքը

1. Գործողությունների ծրագիրը կանանց հնարավորությունների ընդլայնման օրակարգ է: Այն նպատակ ունի արագացնել կանանց դրության բարելավման ոլորտում Նայրոբիի հեռանկարային ռազմավարությունների իրականացումը և տնտեսական, սոցիալական, մշակութային ու քաղաքական հարցերի որոշումների կայացմանը կանանց համակողմանի ու հավասար մասնակցության միջոցով վերացնել այն բոլոր խոչընդոտները, որոնք ընկած են հասարակական ու մասնավոր կյանքում կանանց գործուն ընդգրկման ձանապարհին: Դա նշանակում է նաև, որ անհրաժեշտ է կանանց ու տղամարդկանց իրավունքների ու պատասխանատվության հավասարության սկզբունքը ամրապնդել ընտանիքում, աշխատանքում և առավել լայն՝ ազգային ու միջազգային համատեքստում: Կանանց և տղամարդկանց իրավահավասարությունը մարդու իրավունքների հարցերից մեկն է և սոցիալական արդարության ապահովման պայմաններից մեկը, ինչպես նաև հավասարության, զարգացման ու խաղաղության հասնելու անհրաժեշտ ու հիմնական նախադրյալը: Գործընկերության հարաբերությունների վերափոխումը կանանց և տղամարդկանց իրավահավասարության հիման վրա կայուն զարգացման պայմաններից մեկն է և մարդու շահերի անկյունաքարը: Անհրաժեշտ է այդ նպատակին հասնելու հաստատուն ու տևական նվիրվածություն ցուցաբերել, որպեսզի կանայք ու տղամարդիկ կարողանան փոխհամաձայնեցված աշխատել XXI դարի խնդիրների լուծման համար՝ պաշտպանելով իրենց շահերը, իրենց երեխաների և ամբողջ հասարակության շահերը:
2. Գործողությունների ծրագրում վերստին հաստատվում է այն սկզբունքը, որը ձևակերպվել է Վիեննայի հրչակագրում և գործողությունների ծրագրում՝ ընդունված մարդու իրավունքների համաշխարհային խորհրդաժողովում, այն է՝ կանանց և աղջիկների իրավունքները մարդու համընդիանուր իրավունքների անքակտելի, բաղկացուցիչ և անխզելի մասն են: Լինելով գործողությունների օրակարգ՝ գործողությունների ծրագիրը նպատակ ունի խրախուսել ու պաշտպանել կանանց մարդու բոլոր իրավունքների ու հիմնական ազատությունների լիակատար իրականացումը նրանց ամբողջ կյանքի ընթացքում:
3. Գործողությունների ծրագրում ընդգծվում է, որ կանանց առջև ընդհանուր խնդիրներ են ծառացած՝ կապված ամբողջ աշխարհում գենդերային հավասարության հասնելու ընդհանուր նպատակի հետ, որոնք կարող են լուծվել միայն տղամարդկանց հետ համատեղ և նրանց հետ գործընկերությամբ: Նրանում նկատի է առնվում և գնահատվում նաև, որ որոշ դեպքերում կանայք առանձնահատուկ խոչընդոտների են հանդիպում իրենց հնարավորությունների ընդլայնման գործում:
4. Գործողությունների ծրագրում նախատեսվում է բոլոր անհետաձգելի և հետևողական միջոցների ձեռնարկում աշխարհում խաղաղ, արդար և մարդասիրական պայմաններ ստեղծելու համար, որը հիմնվի մարդու իրավունքների և հիմնական ազատությունների պահպանման վրա, ներառյալ բոլոր տարիքների և հասարակության բոլոր շերտերի բոլոր

**ՀԿԿԱ - ԿԱՆԱԳ ԵՎ ՏՈԱՄԱՐԴԿԱՆՑ ԻՐԱՎԱԿԱՆԱՍՐՈՒԹՅՈՒՆ, ՄԻՋԱՋՋԱՀԻՆ ԻՐԱՎԱԿԱՄ ՎԻԱՍՏՈՎՐՔԵՐԻ, ՀՀ
ՕՐԵՆՔՆԵՐԻ Կ ՕՐԵՆՄՈՐԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԺՊՂՎԱԾՈՒ, ԵՐՆԱՅ 2006**

մարդկանց իրավահավասարության սկզբունքը, այդ նպատակով ընդունվում է, որ համընդգրկուն և կայուն տնտեսական աճը կայուն զարգացման համատեքստում անհրաժեշտ է կայուն սոցիալական զարգացման և սոցիալական արդարության ապահվման համար:

5. Գործողությունների ծրագրի հաջող իրականացումը պահանջում է հաստատ նվիրվածություն կառավարությունների, միջազգային կազմակերպությունների և բոլոր մակարդակների մարմինների կողմից: Այն պահանջում է նաև համապատասխան ռեսուրսների համախմբում ազգային և միջազգային մակարդակներում, ինչպես նաև նոր ու լրացրած ռեսուրսներ՝ ի շահ զարգացող երկրների՝ կանանց դրության բարելավման գործունեության ֆինանսավորման բոլոր գոյություն ունեցող մեխանիզմների գծով, ներառյալ բազմակողմ, երկկողմ և մասնավոր աղբյուրները. Ֆինանսական ռեսուրսներ ազգային, ենթատարածաշրջանային, տարածաշրջանային և միջազգային ինստիտուտների ներուժի ամրապնդման նպատակներով. Նվիրվածություն հավասար իրավունքների, հավասար պարտականությունների և հավասար հնարավորությունների և ազգային, տարածաշրջանային ու միջազգային բոլոր մարմինների աշխատանքներին և որոշումների կայացման գործընթացներին կանանց ու տղամարդկանց հավասար մասնակցության սկզբունքներին. և բոլոր մակարդակների մեխանիզմների հաշվետվողականության ստեղծում կամ ամրապնդում:

Գլուխ II

Գլոբալ համատեքստը

6. Միավորված ազգերի կազմակերպության չորրորդ համաշխարհային խորհրդաժողովը՝ նվիրված կանանց դրությանը, անցնում է այն ժամանակահատվածում, երբ աշխարհը կանգնած է նոր հագարամյակի շեմին:

7. Գործողությունների ծրագիրը հաստատում է կանանց նկատմամբ խորականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիան և հիմնված է կանանց դրության բարելավման ոլորտում Նայրորիի հեռանկարային ռազմավարությունների վրա, ինչպես նաև համապատասխան բանաձևերի՝ ընդունված Տնտեսական ու սոցիալական խորհրդի և Գլխավոր ասամբլեայի կողմից: Գործողությունների ծրագրի մշակումը նպատակ ունի սահմանել առաջնահերթ միջոցառումների հիմնական խումբը, որոնք անհրաժեշտ է իրականացնել հետագա հիմք տարիների ընթացքում:

8. Գործողությունների ծրագրում ընդունվում է այն համաձայնությունների կարևորությունը, որոնք ձեռք են բերվել Երեխաների շահերին նվիրված բարձր մակարդակի համաշխարհային հանդիպման, Միավորված ազգերի կազմակերպության շրջակա միջավայրին և զարգացմանը նվիրված խորհրդաժողովի, Մարդու իրավունքներին նվիրված համաշխարհային խորհրդաժողովի, Ազգարնակչությանը և զարգացմանը նվիրված միջազգային խորհրդաժողովի և Սոցիալական զարգացմանը նվիրված բարձր մակարդակի համաշխարհային հանդիպման ընթացքում, որոնց արդյունքում սահմանվել են որոշակի մոտեցումներ և պարտավորություններ կայուն զարգացման ու միջազգային համագործակցության խրախուսման և այդ ոլորտում Միավորված ազգերի կազմակերպության դերի ամրապնդման առնչությամբ: Փոքր կղզային զարգացող պետությունների կայուն զարգացմանը նվիրված գլոբալ խորհրդաժողովում, Սննդի հիմնախնդիրներին նվիրված միջազգային խորհրդաժողովում, Առաջնային բժշկա-սանհիտարական սպասարկմանը նվիրված միջազգային խորհրդաժողովում և Բոլորի համար կրթության հարցերին նվիրված

**ՀԿԿՍ - ԿԱՆԱԳ ԵՎ ՏՈԱՄԱՐԴԿԱՆՑ ԻՐԱՎԱԿԱԿԱՍԱՐՈՒԹՅՈՒՆ, ՄԻՋԱՋՋԱՀԻՆ ԻՐԱՎԱԿԱՄ ՎԻԱՍՏՈՎՐՔԵՐԻ, ՀՀ
ՕՐԵՆՔՆԵՐԻ Կ ՕՐԵՆՄՐԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԺՊՂՎԱԾՈՒ, ԵՐՆԱՅ 2006**

միջազգային խորհրդաժողովում նույնպես, դրանց որոշակի թեմաների շրջանակներում, քննարկվել են զարգացման գործընթացի և մարդու իրավունքների տարբեր հայեցակետեր, ընդ որում մեծ ուշադրություն է հատկացվել կանանց և աղջկների դերին: Բացի դրանից, Բնիկ ժողովուրդների միջազգային տարվա, Ընտանիքի միջազգային տարվա, Միավորված ազգերի կազմակերպության՝ հանդուրժողականությանը նվիրված տարվա ընթացքում, Գյուղական կանանց վերաբերյալ ժնկան հոչակագրի և Կանանց նկատմանբ բանության վերացման մասին հոչակագրի շրջանակներում հատուկ ուշադրություն է հատկացվել նաև կանանց հնարավորությունների ընդլայնման և նրանց իրավահավասարության ապահովման հարցերին:

9. Գործողությունների ծրագրի խնդիրը, որ լիովին համապատասխանում է Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրության և միջազգային իրավունքի նպատակներին ու սկզբունքներին, բոլոր կանանց իրավունքների ու հնարավորությունների ընդլայնումն է: Կանանց իրավունքների ու հնարավորությունների ընդլայնման համար չափազանց կարևոր նշանակություն ունի համայն կանանց բոլոր մարդու իրավունքների և հիմնական ազատությունների լիակատար իրականացումը: Թեև անհրաժեշտ է նկատի ունենալ ազգային ու տարածաշրջանային յուրահատկությունների և տարբեր պատմական մշակույթների, մշակութային և կրոնական առանձնահատկությունների նշանակությունը, պետությունները, անկախ իրենց քաղաքական, տնտեսական ու մշակութային համակարգերից, պարտավոր են խրախուսել և պաշտպանել մարդու բոլոր իրավունքներն ու հիմնական ազատությունները: Սույն ծրագրի իրականացումը, ընդհուած ազգային օրենսդրության և զարգացման ոլորտի ռազմավարությունների, քաղաքականության, ծրագրերի և առաջնահերթությունների մշակման ու ձևակերպման միջոցով, յուրաքանչյուր պետության ինքնիշխան պարտականությունն է՝ մարդու բոլոր իրավունքների ու հիմնական ազատությունների պահպանմամբ, և առանձին անձանց ու նրանց համայնքների տարբեր կրոնական ու քարոյական արժեքների, մշակութային ժառանգության և փիլիսոփայական համոզմունքների նշանակությունը և դրանց լիակատար հարգումը պետք է նպաստեն կանանց մարդու իրավունքների լիակատար իրականացմանը, իրենց իսկ կողմից, հանուն հավասարության, զարգացման և խաղաղության:

10. Միավորված ազգերի կազմակերպության կանանց տասնամյակի ծերթերումների քննարկմանն ու գնահատմանը նվիրված «Հավասարություն, զարգացում և խաղաղություն» խորհրդաժողովից հետո, որ տեղի ունեցավ 1985 թ. Նայրոբիում, և կանանց դրության բարելավման ոլորտում Նայրոբիի հեռանկարային ռազմավարությունների ընդունումից հետո աշխարհում տեղի են ունեցել քաղաքական, տնտեսական, սոցիալական և մշակութային խոր վերափոխումներ, որոնք թե՛ դրական, թե՛ բացասական ազդեցություն են թողել կանանց դրության վրա: Մարդու իրավունքներին նվիրված համաշխարհային խորհրդաժողովում ընդունվել է, որ կանանց ու աղջկների իրավունքները մարդու համընդիանուր իրավունքների անքակտելի ու անօտարելի բաղկացուցիչն են: Ազգային, տարածաշրջանային և միջազգային մակարդակների քաղաքական, քաղաքացիական, տնտեսական, սոցիալական ու մշակութային կյանքին կանանց համակողմանի ու իրավահավասար մասնակցությունը և սերի հատկանիշով խտրականության բոլոր ձևերի վերացումը միջազգային հանրության առաջնահերթ նպատակներ են: Մարդու իրավունքներին նվիրված համաշխարհային խորհրդաժողովում հաստատվել է բոլոր պետությունների հանդիսավոր խոստումը, այն է՝ համաձայն Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրության, մարդու իրավունքներին և միջազգային իրավունքին առնչվող ուրիշ փաստաթղթերի՝ կատարել բոլորի համար մարդու բոլոր իրավունքների ու հիմնական ազատությունների համընդիանուր հարգման, պահպանման ու

**ՀԿԿԱ - ԿԱՆԱՔ ԵՎ ՏՈԱՄԱՐԴԿԱՆՑ ԻՐԱՎԱԿԱԿԱՍԱՐՈՒԹՅՈՒՆ, ՄԻՋԱՋՋԱՀԻՆ ԻՐԱՎԱԿԱՄ ՎԻԱՍՏՈՎՐԵՐԻ, ՀՀ
ՕՐԵՆՔՆԵՐԻ Կ ՕՐԵՆՄՐԱԿԱՆ ԱԿՏՆԵՐԻ ԺՊՂՎԱԾՈՒ, ԵՐՆԱՅ 2006**

պաշտպանության ապահովման սեփական պարտավորությունները: Այդ իրավունքների ու ազատությունների համընդհանուր բնույթը կասկածի ենթակա չէ:

11. «Սառը պատերազմի» ավարտի արդյունքն էին միջազգային ասպարեզում տեղի ունեցած փոփոխությունները և գերտերությունների մրցակցության նվազումը: Նվազել է գլոբալ գինված հակամարտության առաջացման վտանգը, իսկ միջազգային հարաբերություններն ու երկրների միջև խաղաղության հեռանկարները բարելավվել են: Չնայած գլոբալ կոնֆլիկտի ծագման վտանգի նվազմանը՝ աշխարհի շատ հատվածներ նախկինի պես տառապում են հարձակողական պատերազմներից, գինված հակամարտություններից, գաղութատիրությունից կամ օտարերկյա գերիշխանության այլ ձևերից և օտարերկյա ներխուժումներից, քաղաքացիական պատերազմներից ու ահաբեկչությունից: Կանանց իրավունքների լուրջ խախտումներ են թույլ տրվում, հատկապես գինված հակամարտությունների ընթացքում, և դրանց թվում են սպանությունները, խոշտանգումները, բռնաբարության սիստեմատիկ դեպքերը, հարկադրական հղիության և հարկադրական աբորտների, մասնավանդ էթնիկական գտումների քաղաքականության շրջանակներում:

12. Գլոբալ, տարածաշրջանային և տեղական մակարդակներում խաղաղության և անվտանգության պահպանումը, ինչպես նաև ազրեսիայի ու «էթնիկական գտումների» քաղաքականության կանխումը և գինված հակամարտությունների կարգավորումը վճռական նշանակություն ունեն կանանց և աղջիկների մարդու իրավունքների պաշտպանության, ինչպես նաև նրանց նկատմամբ բռնության բոլոր ձևերի և դրանց՝ իբրև պատերազմի զենքի, օգտագործման վերացման համար:

13. Ռազմական չափից ավելի մեծ ծախսերը, ներառյալ գլոբալ մակարդակում ռազմական ծախսերը և գենքի վաճառքը կամ գենքի շրջանառությունը, ինչպես նաև ներդրումները գենքի արտադրության և ձեռքբերման մեջ հանգեցրել են սոցիալական զարգացման տրամադրության տակ եղած ռեսուրսների կրծատմանը: Պարտքերի բեռը և տնտեսական ուրիշ դժվարություններ պարտադրել են շատ զարգացող երկրների ձեռնարկել կառուցվածքային վերակառուցում: Կառուցվածքային վերափոխման շատ ծրագրերի թերի մշակումը և անբավարար իրականացումը բացասական ազդեցություն են ունեցել սոցիալական զարգացման վրա: Վերջին տասնամյակում զարգացող երկրների մեծ մասում, մասնավորապես այն երկրներում, որոնք մեծ պարտքեր ունեն, կտրուկ մեծացել է աղքատության պայմաններում ապրող մարդկանց քանակը:

14. Այդ պայմաններում անհրաժեշտ է սոցիալական չափմանը ավելի մեծ ուշադրություն հատկացնել: Տնտեսական աճի արագացումը, թեև այն անհրաժեշտ է սոցիալական զարգացման համար, ինքնին չի հանգեցնում բնակչության կյանքի որակի բարձրացմանը: Որոշ դեպքերում կարող են առաջանալ այնպիսի պայմաններ, որոնք կարող են սրել սոցիալական անհավասարությունը և մարգինալացումը: Ուստի անհրաժեշտ է որոնել նոր այլընտրանքներ, որոնք հասարակության բոլոր անդամների համար ապահովեն տնտեսական աճի առավելություններից օգտվելու հնարավորություն՝ իիմնված գլոբալ մոտեցման վրա զարգացման բոլոր հայեցակետերին՝ տնտեսական աճին, տղամարդկանց և կանանց հավասարությանը, սոցիալական արդարությանը, շրջակա միջավայրի պահպանմանն ու պաշտպանությանը, կայունությանը, համերաշխությանը, մասնակցությանը, խաղաղությանը և մարդու իրավունքների հարգմանը:

15. Աշխարհում դիտվող անցումը ժողովրդավարությանը ազատագրեց շատ երկրների քաղաքական կյանքը, սակայն առանցքային որոշումներին կանանց՝ որպես լիիրավ և տղամարդկանց հավասար գործընկերների, զանգվածային մասնակցություն, մասնավորապես

**ՀԿԿԱ - ԿԱՆԱՔ ԵՎ ՏՈԱՄԱՐԴԿԱՆՑ ԻՐԱՎԱԿԱՎԱՍԱՐՈՒԹՅՈՒՆ, ՄԻՋԱՋՋԱՀԻՆ ԻՐԱՎԱԿԱՄ ՎԻԱՍՏՈՎՐԵՐԻ, ՀՀ
ՕՐԵՆՔՆԵՐԻ Կ ՕՐԵՆՄՐԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ, ԵՐՆԱՅ 2006**

քաղաքականության մեջ, դեռևս ծերք չի բերվել: Հարավային Աֆրիկայում վերջ է տրվել օրինականացված ռասիզմի քաղաքականությանը, ապարտեհուն, և իրականացվել է իշխանության փոխանցումը խաղաղ և ժողովրդավարական ձանապարհով: Կենտրոնական և Արևելյան Եվրոպայում անցումը խորհրդարանական ժողովրդավարության կատարվել է արագ տեմպերով և տարբեր սցենարներով՝ կախված որոշակի պայմաններից, որոնք գոյություն ունեն յուրաքանչյուր երկրում: Ընդհանուր առնամբ այդ գործընթացը խաղաղ բնույթ է ունեցել, սակայն որոշ երկրներում այն բարդացել է զինված հակամարտությունների պատճառով, որոնք մարդու իրավունքների լուրջ խախտումների են հանգեցրել:

16. Տնտեսական ընդհանուր անկումը, ինչպես նաև քաղաքական անկայունությունը որոշ տարածաշրջաններում պայմանավորեցին շատ երկրների նահանջը զարգացման ոլորտում սահմանված նպատակներից: Ավելի քան 1 միլիարդ մարդկանց շրջանում, որոնք ապրում են ծայրահեղ աղքատության պայմաններում, կանայք ճնշող մեծամասնություն են կազմում: Բոլոր սեկտորներում փոփոխությունների ու վերակառուցման արագ գործընթացը հանգեցրեց նաև գործազրկության և ոչ լրիվ գրադարձության աճի, և դա վիճակվեց հատկապես կանանց: Շատ դեպքերում կառուցվածքային վերակառուցման ծրագրերում չի նախատեսվել ոչ բնակչության խոցելի և անբարենպաստ պայմաններում գտնվող խնբերի կամ կանանց համար բացասական հետևանքները նվազագույնի հասցնելը, ոչ դրանց դրական ազդեցության ապահովումը այդ խնբերի վրա՝ տնտեսական և սոցիալական գործունեության մեջ նրանց մասնակցության մարգինալացումը կանխելով: Բազմակողմ առևտորային բանակցությունների ուրուգվայական փուլի ամփոփիչ ակտում ընդգծվել է տարբեր երկրների տնտեսության հարածուն փոխկախվածությունը, ինչպես նաև առևտորի ազատականացման և բաց, դինամիկ շուկաների մատչելիության ապահովման կարևոր նշանակությունը: Այդ ժամանակահատվածը բնութագրվել է նաև նշանակալի ռազմական ծախսերով մի շարք տարածաշրջաններում: Չնայած որոշ երկրների կողմից զարգացման նպատակով պաշտոնական օգնության (ԶՊՕ) մեծացմանը՝ ԶՊՕ-ի ընդհանուր ծավալը վերջին շրջանում կրծատվել է:

17. Բացարձակ աղքատությունը և չքավորության ֆեմինացումը, գործազրկությունը, շրջակա միջավայրի ավելի ու ավելի խոցելիությունը, կանանց նկատմամբ գործադրվող բռնության հարատևությունը և շատ դեպքերում մարդկության կեսի գրկումը իշխանության և կառավարման ինստիտուտների մատչելիությունից ցույց են տալիս, որ անհրաժեշտ է շարունակել զարգացման, խաղաղության և անվտանգության հասնելու ուղիների որոնումները, այն էլ կայուն զարգացման ապահովման ձանապարհով, որի անկյունաքարը մարդու շահերն են: Մարդկության կեսը կազմող կանանց մասնակցությունը և դեկավարությունը անհրաժեշտ պայման է նման որոնման հաջողության համար: Հետևաբար միայն կառավարությունների և ժողովուրդների միջև գործընկության ոգով միջազգային հարաբերությունների նոր դարաշրջանը, իրավահակասար միջազգային սոցիալ-տնտեսական պայմանները և տղամարդկանց ու կանանց հարաբերությունների արմատական փոխակերպումը համակողմանի և հավասար գործընկերության հնարավորություն կտան աշխարհին լուծելու XXI դարի խնդիրները:

18. Համաշխարհային տնտեսության վերջին միտումները շատ դեպքերում լրջորեն առնչվել են հատկապես կանանց և աղջիկներին, որոնց մեծ մասն ապրում է զարգացող երկրներում: Այն պետություններում, որոնք արտաքին պարտքի մեջ բեռ ունեն, ծրագրերն ու կառուցվածքային վերակառուցման միջոցները՝ թեավետ երկարաժամկետ դրական ազդեցություն ունեցող, հանգեցրին սոցիալական ծախսերի կրծատման և այդպիսով բացասականորեն անդրադարձան կանանց դրության վրա, հատկապես Աֆրիկայում և առավել թույլ զարգացած

**ՀԿԿԱ - ԿԱՆԱԳ ԵՎ ՏՈԱՄԱՐԴԿԱՆՑ ԻՐԱՎԱԿԱԿԱՍԱՐՈՒԹՅՈՒՆ, ՄԻՋԱՋՋԱՀԻՆ ԻՐԱՎԱԿԱՄ ՎԻԱՍՏՈՎՐՔԵՐԻ, ՀՀ
ՕՐԵՆՔՆԵՐԻ Կ ՕՐԵՆՄՈՐԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ, ԵՐՆԱՅ 2006**

Երկրներում: Նման իրավիճակը խորանում է այն դեպքերում, երբ կառավարությունների կողմից հիմնական սոցիալական ծառայությունների պարտականությունները դրվում են կանաց վրա:

19. Տնտեսական անկումը շատ զարգացած ու զարգացող երկրներում, ինչպես նաև տեղի ունեցող վերակառուցումը անցումային տնտեսությամբ երկրներում բացասական հետևանքներ ունեցան կանաց գրավածության վրա: Հաճախ կանայք այլընտրանք չեն ունենում և գնում են այնպիսի աշխատանքի, որը գրավածության երկարաժամկետ երաշխիքներ չի տալիս կամ կապված է աշխատանքի վտանգավոր պայմանների հետ, աշխատում են տնայնագործական արտադրության անպաշտաբան պայմաններում կամ մնում են գործազուրկ: Շատ կանայք, մտնելով աշխատանքի շուկա, համաձայնում են վատ վարձատրվող և ոչ հեղինակավոր աշխատանքի՝ ծգտելով բարձրացնել սեփական տնային տնտեսության եկամուտը. ուրիշները վճռում են դիմել արտագաղթի նույն նպատակներով: Այս ամենը, չգուգակցվելով կանաց ուրիշ պարտականությունների ինչ-որ չափով կրծատումով, հանգեցրել է կանաց ուսերին ընկած աշխատանքային ծանրաբեռնվածության ընդհանուր ծավալի մեծացման:

20. Մակրո- և միկրոտնտեսական քաղաքականությունը և ծրագրերը, ներառյալ կառուցվածքային վերակառուցումը, միշտ չէ, որ մշակվել են՝ հաշվի առնելով կանաց և աղջկների համար դրանց հետևանքները, մանավանդ աղքատության պայմաններում ապրողների: Աղքատությունը աճել է ինչպես բացարձակ, այնպես էլ հարաբերական արտահայտությամբ, և աղքատության մեջ ապրող կանաց թվաքանակը տարածաշրջանների մեծ մասում մեծացել է: Շատ կանայք աղքատության պայմաններում են ապրում քաղաքներում, սակայն գյուղական և հեռավոր շրջաններում ապրող կանաց ճակատագիրը հատուկ ուշադրություն է պահանջում, քանի որ նման շրջաններում զարգացումը լճացում է ապրում: Զարգացող երկրներում, նույնիսկ այնպիսի երկրներում, որտեղ ազգային ցուցանիշներով բարելավում է արձանագրվել, գյուղական շրջանների կանաց մեծ մասը նախկինի պես ապրում է տնտեսական հետամնացության և սոցիալական օտարման պայմաններում:

21. Կանայք տնային տնտեսությունում, հասարակությունում և աշխատավայրում թե՝ վարձատրվող, թե՝ չվարձատրվող աշխատանքի շնորհիվ կարևորագույն դերակատար են տնտեսության մեջ և աղքատության դեմ պայքարում: Հարածուն թվով կանայք հասնում են տնտեսական ինքնուրույնության՝ գտնելով եկամուտ բերող աշխատանք:

22. Աշխարհում բոլոր տնային տնտեսությունների քառորդ մասը գլխավորվում է կանաց կողմից, իսկ շատ տնային տնտեսություններ կախված են կանաց եկամուտներից, անգամ տղանարդկանց առկայությամբ: Այն տնային տնտեսությունները, որոնք կանայք են վարում, ամենից հաճախ են հայտնվում ամենաաղքատների շրջանում, ինչը բացատրվում է խտրականությամբ աշխատավարձի հարցում, որը արմատացած է աշխատանքի շուկայում մասնագիտական խտրագատման կառույցների և սերի հատկանիշով այլ արգելքների հետևանքով: Կին գլխավորով տնային տնտեսությունների թվաքանակի աճի գործոններն են ընտանիքի քայլացումը, գյուղական բնակչության տեղաշարժը քաղաք և հակառակը, միջազգային միգրացիան, պատերազմները և բռնի տեղահանությունը սեփական բնակավայրերից:

23. Ընդունելով, որ խաղաղության և անվտանգության ձեռքբերումը և պահպանումը անհրաժեշտ պայման է տնտեսական ու սոցիալական առաջընթացի համար, կանայք ավելի ու ավելի ակտիվորեն են դրսնորում իրենց՝ իբրև ամենաատարբեր բնույթի կենտրոնական դերակատարների, դեպի խաղաղություն մարդկության առաջընթացի գործում: Անուր

խաղաղության հաստատման անհրաժեշտ տարր է որոշումների կայացման, կոնֆլիկտների կանխարգելման ու կարգավորման գործընթացներին և մնացած բոլոր խաղաղասիրական ձեռնարկումներին կանանց բազմակողմանի մասնակցությունը:

24. Կրոնը, հավատքն ու դավանանքը գլխավոր դեր են խաղում միլիոնավոր կանանց ու տղամարդկանց կյանքում և որոշիչ ազդեցություն են ունենում նրանց կենսակերպի և այն հույսերի վրա, որոնք կապում են նրանք ապագայի հետ: Մտքի, խղճի և դավանանքի ազատության իրավունքն անխցելի է, և դրանից պետք է օգտվեն բոլորը: Այդ իրավունքը ներառում է դավանանքի և կրոնը կամ հավատքն ընտրելու ազատությունը կամ անհատապես, կամ ուրիշ մարդկանց հետ ընկերակցությամբ, բաց կամ մասնավոր կերպով, ինչպես նաև սեփական կրոնական համոզմունքները կամ հավատքը արտահայտելու ազատությունը տաճարներ հաճախելով, կրոնական ծեսեր կատարելով, գործնականում և դասավանդման ընթացքում: Որպեսզի կյանքի կոչվեն հավասարության, զարգացման ու խաղաղության սկզբունքները, անհրաժեշտ է լիովին հարգել այդ իրավունքներն ու ազատությունները: Կրոնը, մտածողությունը, գիտակցությունը և հավատքը կարող են և ունակ են ավանդ ունենալու կանանց ու տղամարդկանց բարոյական ու հոգևոր պահանջմունքների բավարարման և հասարակությունում նրանց ներուժի լիակատար իրացման խնդրում: Սակայն հայտնի է, որ ծայրահեղականության ցանկացած ծև կարող է բացասական ազդեցություն ունենալ կանանց վրա և հանգեցնել բռնության ու խտրականության:

25. Կանանց դրությանը նվիրված չորրորդ համաշխարհային խորհրդաժողովը պետք է արագացնի 1975 թվականին սկսված գործընթացը, որը Միավորված ազգերի կազմակերպությունը հրչակել էր Կանանց միջազգային տարի: Այդ տարին շրջադարձային եղավ օրակարգում կանանց հիմնախնդիրներն ընդգրկելու հարցում: Միավորված ազգերի կազմակերպության Կանանց տասնամյակը (1976-1985 թթ.) դարձավ կանանց դրության և իրավունքների ուսումնասիրության և բոլոր մակարդակների որոշումների կայացման գործում կանանց ընդգրկելու համաշխարհային նախաձեռնություն: 1979 թ. Գլխավոր ասամբլեան ընդունեց Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ծեսերի վերացման մասին կոնվենցիան, որը ուժի մեջ մտավ 1981 թ. և ամրագրեց այն չափորոշչը, թե ինչ ասել է կանանց և տղամարդկանց հավասարություն: 1985 թ. Միավորված ազգերի կազմակերպության Կանանց տասնամյակի քննարկման ու գնահատման համաշխարհային խորհրդաժողովում, որ անցավ «Հավասարություն, զարգացում և խաղաղություն» կարգախոսով, ընդունվեցին Կանանց դրության բարելավման ոլորտում Նայրորիի հեռանկարային ռազմավարությունները, որոնք պետք է իրականացվեն 2000 թվականին: Կանանց և տղամարդկանց հավասարության հասնելու գործում նշանակալի առաջընթաց է արձանագրվել: Շատ երկրների կառավարություններ ընդունել են օրենքներ կանանց և տղամարդկանց իրավահավասարությանը աջակցելու նպատակով, ստեղծվել են ազգային մեխանիզմներ, որոնք կոչված են ապահովելու հասարակության բոլոր ոլորտներում գեներային հիմնախնդիրների պատշաճ ներառումը: Միջազգային հաստատությունները սկսել են մեծ ուշադրություն հատկացնել կանանց դրությանը և նրանց խաղացած դերին:

26. Ոչ կառավարական սեկտորի, մանավանդ կանանց կազմակերպությունների և ֆեմինիստական խմբերի ավելի ու ավելի ամրապնդումը փոփոխությունների դրդող շարժիչ ուժ է դարձել: Ոչ կառավարական կազմակերպությունները խոսափողի կարևոր դեր են խաղում, որ կոչ է անում կատարելագործել կանանց դրության բարելավումը ապահովող օրենսդրությունն ու մեխանիզմները: Բացի դրանից, դրանք զարգացման նոր մոտեցումների խթանից են դարձել: Շատ երկրների կառավարություններ սկսել են ավելի հաճախ ընդունել այն

**ՀԿԿԱ - ԿԱՆԱՔ ԵՎ ՏՈԱՄԱՐԴԿԱՆՑ ԻՐԱՎԱԿԱՆԱՄԱՐԴՈՒԹՅՈՒՆ, ՄԻՋԱՋՋԱՀԻՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՎԻԱՍՏՈՎՐԵՐԻ, ՀՀ
ՕՐԵՆՔՆԵՐԻ Կ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԺՈՂՎԱԾՈՒ, ԵՐՆԱՅ 2006**

կարևոր դերը, որ խաղում են ոչ կառավարական կազմակերպությունները, ինչպես նաև նրանց հետ աշխատանքի կարևորությունը հանուն առաջընթացի: Սակայն որոշ երկրներում կառավարությունները նախկինի պես սահմանափակում են ոչ կառավարական կազմակերպությունների գործողությունների ազատությունը: Ոչ կառավարական կազմակերպությունների միջոցով կանայք մասնակցել են տեղական, ազգային, տարածաշրջանային և համաշխարհային համաժողովներին ու միջազգային բանավեճերին, ինչպես նաև լուրջ ազդեցություն են թողել դրանց աշխատանքի վրա:

27. 1975 թվականից ի վեր թե՛ կանանց, թե՛ տղամարդկանց մասին գիտելիքները հարստացել են և օգնում են հետագա միջոցներ ձեռնարկել՝ ուղղված կանանց և տղամարդկանց հավասարության ձեռքբերմանը: Որոշ երկրներում կանանց և տղամարդկանց փոխհարաբերությունների էական փոփոխություններ են տեղի ունեցել. դրանք նախ և առաջ այն երկրներն են, որտեղ կանանց կրթության հսկայական հաջողություններ են ձեռք բերվել, և աննշան չափով մեծացել է նրանց բաժնեմասը վարձատրվող աշխատումի կառուցվածքում: Սեռերի միջև աշխատանքը բաժնող սահմանգիծը՝ ըստ արտադրողական դերի և վերարտադրողական դերի, աստիճանաբար ջնջվում է. կանայք սկսել են թափանցել աշխատանքի այնպիսի ոլորտներ, որտեղ նախկինում գերիշխում էին տղամարդիկ, իսկ տղամարդիկ սկսել են ավելի շատ տնային պարտականություններ ստանձնել, ներառյալ երեխաների խնամքը: Սակայն կանանց դերերի փոփոխություններն ավելի նշանակալից են եղել և ավելի արագ տեմպերով են կատարվել, քան տղամարդկանց դերերի փոփոխությունները: Շատ երկրներում դեռևս չեն ընդունել, որ կանանց և տղամարդկանց ձեռքբերումների ու զբաղմունքների տարբերությունները յուրաքանչյուր սերի սոցիալապես տարբերարկված դերերի հետևանք են, ոչ թե կենսաբանորեն նախասահմանված տարբերություններ:

28. Ավելին, Նայրոբիի խորհրդաժողովից 10 տարի անց էլ դեռևս ձեռք չի բերվել կանանց և տղամարդկանց հավասարությունը: Միջին հաշվով աշխարհի օրենսդրական մարմինների պատգամավորական կազմի ընդամենը 10 տոկոսն է բաժին ընկնում կանանց, և նրանք նախկինի պես թերի են ներկայացված ազգային ու միջազգային վաշչական՝ թե՛ պետական, թե՛ մասնավոր կառույցների մեծ մասում: Բացառություն չէ նաև Միավորված ազգերի կազմակերպությունը: Իր հիմնադրումից 50 տարի անց Միավորված ազգերի կազմակերպությունը նախկինի պես հրաժարվում է լիդեր կանանց արդյունավետ օգտագործումից, քանի որ կանայք թերի են ներկայացված թարտուղարության և մասնագիտացված հաստատությունների դեկավար պաշտոններում:

29. Կանայք չափազանց կարևոր դեր են խաղում ընտանիքում: Ընտանիքը հասարակության հիմնական բջիջն է և որպես այդպիսին՝ պետք է ամրապնդվի: Այն համընդգրկուն պաշտպանության ու աջակցության իրավունք ունի: Տարբեր մշակութային, քաղաքական և հասարակական կառույցների շրջանակներում գոյություն ունեն ընտանիքի տարբեր ձևեր: Անհրաժեշտ է հարգել ընտանիքի անդամների իրավունքները, հնարավորությունները և պարտականությունները: Մեծ է կանանց ավանդը ընտանիքի բարեկեցության ապահովման և հասարակության գարգագման գործում, որը դեռևս ձանաչված չէ կամ որի նշանակությունը լիովին հաշվի չի առնվում: Անհրաժեշտ է ընդունել մանկածնության, մայրության և ընտանիքում ու երեխաների դաստիարակության գործնականությունը ծնողների դերի սոցիալական նշանակությունը: Երեխաների դաստիարակության գործնականությունը պահանջում է բաղդատել ծնողների, տղամարդկանց ու կանանց պարտականությունները և առհասարակ հասարակության մեջ: Կանանց մանկածնությունը,

**ՀԿԿԱ - ԿԱՆԱՔ ԵՎ ՏՈԱՄԱՐԴԿԱՆՑ ԻՐԱՎԱԿԱՍԱՐՈՒԹՅՈՒՆ, ՄԻՋԱՋՋԱՀԻՆ ԻՐԱՎԱԿԱՄ ՎԻԱՍՏՈՎՐԵՐԻ, ՀՀ
ՕՐԵՆՔՆԵՐԻ Կ ՕՐԵՆՄՐԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԺՈՂՎԱԾՈՒ, ԵՐՆԱՅ 2006**

մայրությունը, ծնող լինելը և դերը բնակչության վերարտադրության գործում չպետք է նրանց նկատմամբ խտրականության հիմք դառնան կամ սահմանափակեն հասարակության կյանքին նրանց լիակատար մասնակցությունը: Հարկ է նաև ընդունել այն կարևոր դերը, որ շատ երկրներում հաճախ խաղում են կանայք ընտանիքի մյուս անդամների խնամքի գործընթացում:

30. Թեև բնակչության աճի տեմպերը դանդաղում են, երկրագնդի բնակչության թվաքանակը բացարձակ արտահայտությամբ հասել է աննախադեպ բարձր մակարդակի. այսօր բնակչության տարեկան աճը կազմում է մոտ 86 միլիոն մարդ: Ընտանիքներում կերակրողների և խնամքի տակ եղողների հարաբերակցության վրա խոր ազդեցությունները նաև երկու խոչոր ժողովրդագրական միտումներ ունեն: Շատ զարգացող երկրներում բնակչության 45-50 տոկոսը չի հասել 15 տարեկանի, մինչդեռ զարգացած արդյունաբերական պետություններում աճում է ծերերի թե՛ քանակը, թե՛ տեսակարար կշիռը: Ըստ Միավորված ազգերի կազմակերպության կանխատեսումների՝ 2025 թվականին 60 և ավելի տարիք ունեցող բնակչության 72 տոկոսը ապելու է զարգացած երկրներում, իսկ նրանց կեսից ավելին կանայք են լինելու: Կանանց վրա է, անհամաշափ բարձր աստիճանի, երեխաների, հիվանդների ու ծերերի խնամքը, ինչը բացատրվում է տղամարդկանց ու կանանց հավասարության չգոյությամբ և վարձատրվող ու չվարձատրվող աշխատանքի անհավասարակշիռ բաշխմանը:

31. Շատ կանայք բախվում են առանձնահատուկ արգելքների, որոնք բացատրվում են ոչ միայն իրենց սեռով, այլև տարբեր գործուներով: Շատ հաճախ այդ գործոնները կանանց մեկուսացման կամ օտարման պատճառ են դաշնում: Նրանք, մասնավորապես, զրկված են մարդու իրավունքներից օգտվելու հնարավորությունից, կրթության և մասնագիտական պատրաստության մատչելիությունից, զբաղվածությունից, բնակարանային ու տնտեսական ինքնուրունությունը ապահովելու, ինչպես նաև որոշումների կայացման գործընթացներին մասնակցելու հնարավորությունից: Նման կանայք հաճախ հասարակության կյանքում լիարժեք ավանդ ունենալու հնարավություն չեն ստանում:

32. Ընթացիկ տասնամյակում նկատվել է նաև բնիկ բնակչության ներկայացուցիչ կանանց յուրահատուկ շահերի ու հիմնախնդիրների հարածուն ճանաչումը, որոնց ինքնուրությունը, մշակութային ավանդույթները և սոցիալական կազմակերպման ձևերը գորացնում ու ամրապնդում են այն հասարակությունը, որում ապրում են նրանք: Բնիկ բնակչության ներկայացուցիչ կանայք հաճախ արգելքների են հանդիպում թե՛ որպես կանայք, թե՛ որպես բնիկ համայնքների անդամներ:

33. Վերջին 20 տարիներին աշխարհում կապի ոլորտի շեշտակի վերելք է նկատվում: Համակարգչային տեխնիկայի, արբանյակային և կարելային հեռուստատեսության կատարելագործման պայմաններում տեղեկատվության համընդիմանուր մատչելիությունը շարունակում է աճել ու ընդլայնվել՝ նոր հնարավորություններ ստեղծելով հաղորդակցությանը և զանգվածային լրատվության միջոցներին կանանց մասնակցության և կանանց մասին տեղեկատվության տարածման համար: Միաժամանակ գլոբալ հաղորդակցական ցանցերը օգտագործվել են նաև նեղ առևտրային և սպառողական նպատակներով՝ կանանց մասին ստեղծութիպային և նրանց արժանապատվությունը նվաստացնող պատկերացումների տարածման համար: Քանի դեռ կանայք հավասար իիմունքներով չեն մասնակցի թե՛ հաղորդակցությունների ու զանգվածային տեղեկատվության, ինչպես նաև արվեստի տեխնիկական ապահովմանը, թե՛ այդ ոլորտների դեկավարմանը, նրանք նախկինի պես կպատկերվեն խեղաթյուրված լույսի տակ, իսկ

**ՀԿԿՍ - ԿԱՆԱՆՑ ԵՎ ՏՈԱՄԱՐԴԿԱՆՑ ԻՐԱՎԱԿԱԿԱՍԱՐՈՒԹՅՈՒՆ, ՄԻՋԱՋՋԱՀԻՆ ԻՐԱՎԱԿԱՄ ՎԻԱՍՏՈՎՐՔԵՐԻ, ՀՀ
ՕՐԵՆՔՆԵՐԻ Կ ՕՐԵՆՄՈՐԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԺՈՂՎԱԾՈՒ, ԵՐՆԱՅ 2006**

ծանոթությունը կանանց կյանքի իրականությանը նախկինի պես կբացակայի: Զանգվածային լրատվության միջոցները ներունակ են մեծապես աջակցելու կանանց դրության բարելավմանը և տղամարդկանց ու կանանց հավասարության ապահովմանը կանանց և տղամարդկանց ոչ ստերեոտիպային, բազմազան և հավասարակշիռ պատկերման միջոցով՝ հիմնված մարդկային անհատի արժանապատվության ու արժեքների հարգման վրա:

34. Շրջակա միջավայրի վիճակի շարունակվող վատթարացումը, որն անդրադարձնում է բոլոր մարդկանց կյանքի վրա, հաճախ ավելի անմիջականորեն վնասում է կանանց: Կանանց առողջությանը և նրան գոյատևման միջոցների գոյությանը սպառնում են աղտոտումը և թունավոր արտանետումները, լայնամասշաբ անտառահատումները, անապատացումը, երաշտը, ստորգետնյա, առափնյա, ծովային պաշարների սպառնումը, որոնք ուղեկցվում են կանանց առողջության՝ շրջակա միջավայրի հետ կապված խաթարումներով և անգամ մահվան դեպքերով: Դրանից առավելապես տուժում են գյուղական և բնիկ բնակչության կանայք, որոնց տնտեսությունը և ամենօրյա կեցությունը ուղղակիորեն կախված է էկոհամակարգի կայունությունից:

35. Աղքատությունը և շրջակա միջավայրի վատթարացումը սերտորեն փոխկապակցված են: Եթե աղքատության հետևանքով մեծանում է շրջակա միջավայրի ծայրահեղ ծանրաբեռնվածությունը, ապա մոլորակի շրջակա միջավայրի դրության հարատև վատթարացման գլխավոր պատճառը սպառնան և արտադրության ոչ խելամիտ կառուցներն են, հատկապես զարգացած արդյունաբերական երկրներում, մի բան, որ լուրջ անհանգստության առարկա է և հանգեցնում է աղքատության և առկա անհավասակշռության խորացման:

36. Համընդիանուր միտումները խոր փոփոխություններ են առաջացրել ընտանիքի գոյատևման ռազմավարություններում ու կառուցվածքներում: Բոլոր տարածաշրջաններում էապես աճել է տեղափոխությունը գյուղից քաղաք: Կանխատեսվում է, որ 2000 թվականին աշխարհի քաղաքային բնակչությունը կկազմի ընդհանուր բնակչության թվի 47 տոկոսը: Մոտ 125 մլն մարդ համարվում է միգրանտ, փախստական և տեղաշարժված անձ, ընդ որում նրանց կեսը ապրում է զարգացող երկրներում: Մարդկանց այդ զանգվածային տեղաշարժերը խոր հետևանքներ են ունենում ընտանիքի կառուցվածքի ու բարեկեցության վրա, ընդ որում այդ հետևանքները միատեսակ չեն կանանց և տղամարդկանց համար և շատ դեպքերում հանգում են կանանց սեքսուալ շահագործման:

37. Առողջապահության համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) գնահատականներով 1995 թվականի սկզբին ծերքերովի իմունահամակարգի անկման համախտանիշով (ԶԻԱԿ) տառապող անձանց թիվը կազմում է 4,5 մլն. մարդ: Այն պահից, երբ առաջին անգամ ախտորոշվեց մարդու իմունահամակարգի անկման վիրուսով ախտահարումը (ՄԻԱԿ), վարակված տղամարդկանց, կանանց և երեխաների թիվը կազմել է մոտ 19,5 մլն մարդ, ընդ որում կանխատեսվում է, որ տասնամյակի վերջում վարակված կիննի ևս 20 միլիոնը: Եթե հաշվի առնենք նոր դեպքերը, ապա կանանց շրջանում վարակման հավանականությունը երկու անգամ ավելի մեծ է, քան տղամարդկանց շրջանում: ԶԻԱԿ-ի համաձարակի սկզբնական փուլուն վարակված կանանց թիվը մեծ չէր, սակայն այժմ նրանց թիվը կազմում է 8 մլն մարդ: Խոցելի են համարվում հատկապես երիտասարդ կանայք և պատանիները: Սպասվում է, որ 2000 թվականին վարակված կիննի ավելի քան 13 մլն կին, իսկ 4 մլն կին կմահանա ԶԻԱԿ-ի հետ կապված հիվանդություններից: Բացի դրանից, ամեն տարի երևան են գալիս մոտ 250 մլն այնպիսի հիվանդությունների դեպքեր, որոնք փոխանցվում են սեռական ձանապարհով: Սեռական ձանապարհով փոխանցվող հիվանդությունների հիվանդացությունը, ներառյալ

ՄԻԱՎ/ԶԻԱՀ-ը, կանանց և աղջիկների շրջանում աճում է տագնապալի տեմպերով, հատկապես զարգացող երկրներում:

38. 1975 թվականից ի վեր նշանակալի ծավալով գիտելիք և տեղեկատվություն է կուտակվել կանանց դրույթան և այն պայմանների մասին, որոնց մեջ ապրում են նրանք: Երկրների մեծ մասում իրենց կյանքի ամբողջ ընթացքում կանայք առօրյայում և ապագայի հետ կապված ծգոտումներում բախվում են սահմանափակումների՝ խտրական վերաբերմունքի ձևով, անարդար սոցիալ-տնտեսական կառուցմների և ռեսուրսների սղության, ինչը խոչընդոտում է հասարակության կյանքին նրանց համակողմանի ու իրավահավասար մասնակցությունը: Մի շարք երկրներում մինչև ծնվելը երեխայի սեռի ընտրության գործելակերպը, ամենավաղ տարիքի աղջիկների առավել մեծ մահացությունը և տղաների համեմատությամբ աղջիկների ավելի ցածր հաճախումը դպրոց հնարավորություն են տալիս խոսելու այն մասին, որ տղաների նկատմամբ նախընտրելի վերաբերմունքը սահմանափակում է սննդամթերքի, կրթության և առողջապահության մատչելիությունը աղջիկների համար և անգամ ապրելու հնարավորությունը: Կանանց նկատմամբ խտրականությունը սկսվում է կյանքի ամենավաղ փուլերում, ուստի պայքարել դրա դեմ անհրաժեշտ է հենց այդ ժամանակից և հետագայում:

39. Ներկայիս աղջիկները վաղվա կանայք են: Աղջիկների հմտությունները, գաղափարները և եռանդուժք չափազանց կարևոր նշանակություն ունեն հավասարության, զարգացման ու խաղաղության նպատակներին լիովին հասնելու համար: Որպեսզի աղջիկը կարողանա լիովին զարգացնել իր ներուժը, պետք է դաստիարակվի բարենպաստ պայմաններում, պետք է բավարարվեն նրա գոյատևման, պաշտպանության ու զարգացման հոգևոր, մտավոր և նյութական պահանջմունքները, ապահովվի նրա իրավահավասարությունը: Որպեսզի կանայք դաշնան տղամարդկանց իրավահավասար գործընկերներ կյանքի ու զարգացման բոլոր ոլորտներում, անհրաժեշտ է այսօր իսկ ընդունել աղջիկների արժանապատվության իրավունքը և մարդկային անհատի արժեքը և ապահովել, որ նրանք լիակատար կերպով օգտվեն մարդու իրավունքներից ու հիմնական ազատություններից, ներառյալ Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայով երաշխավորվող իրավունքները, որի համընդիանուր վավերացումը չափազանց անհրաժեշտ է: Այսուհանդերձ ամբողջ աշխարհում տվյալներ գոյություն ունեն, որոնք վկայում են, որ աղջիկների նկատմամբ խտրականությունը և բռնությունը սկսվում են կյանքի ամենավաղ շրջանում և չեն թուլանում նրանց ամբողջ կյանքի ընթացքում: Հաճախ նրանց համար ավելի ցածր է սննդի, ֆիզիկական ու հոգեկան առողջության պահպանման և կրթության մատչելիությունը, ավելի սակավ են իրավունքները, հնարավորությունները և մանկության ու պատանեկության հետ կապված բարիքները, քան տղաների համար: Նրանք հաճախ են դաշնուում սեքսուալ և տնտեսական շահագործման տարբեր ձևերի, պեղոֆիլիայի, հարկադրական մարմնավաճառության և այնպիսի վնասակար սովորությունների գոհեր, ինչպիսիք են նորածին աղջիկների մեղքնումը և երեխայի սեռի ընտրությունը մինչև նրա ծնվելը, արնապղծությունը, կանանց սեռական օրգանները խոշտանգող վիրահատությունները և վաղ ամուսնությունները, ներառյալ կնության տալը մանկական հասակուու:

40. Երկրագնդի բնակչության կեսը մինչև 25 տարեկան հասակում է, և աշխարհի երիտասարդության մեծ մասը՝ ավելի քան 25 տոկոսը, ապրում է զարգացող երկրներում: Այն մարդկա, որոնք որոշում են քաղաքականությունը, պետք է հաշվի առնեն այդ ծանրակշիռ ժողովրդագրական գործուները: Հատուկ միջոցներ պետք է ձեռնարկվեն, որպեսզի աղջիկները սոցիալական, մշակութային, քաղաքական ու տնտեսական կյանքի բոլոր

մակարդակների ղեկավարության գործին արդյունավետ մասնակցելու համար անհրաժեշտ հմտություններ ծեռք բերեն: Միջազգային հանրության համար վճռական նշանակություն կունենա ապագայի նոր ուղղության ցուցադրումը, այնպիսի ուղղության, որ կանանց ու տղամարդկանց նոր սերմադին ոգեշնչի մղվելու առավել արդար հասարակության կառուցման համատեղ աշխատանքի: Լիդերների այդ նոր սերունդը պետք է ընդունի այնպիսի աշխարհի անհրաժեշտությունը և աջակցի դրա կառուցմանը, որում յորաքանչյուր երեխա ազատ լինի անարդարությունից, ճնշումներից և անիրավահավասարությունից և որում յորաքանչյուր ոք՝ կին թե տղամարդ, ազատորեն գործադրի սեփական ներուժը: Ուստի կանանց և տղամարդկանց հավասարության սկզբունքը պետք է դառնա սոցիալականացման գործընթացի օրգանական տարր:

Գլուխ III

Կարևորագույն հիմնախնդրային ոլորտները

41. Կանանց դրության բարելավումը և տղամարդկանց ու կանանց իրավահավասարության ապահովումը մարդու իրավունքների հարցերից մեկն է և սոցիալական արդարության ապահովման պայմաններից մեկը, և այն չպետք է քննարկվի առանձին, որպես կանանց առնչվող հարցերից մեկը: Դա կայուն, արդար և զարգացած հասարակության կառուցման միակ միջոցն է: Կանանց իրավունքների ու հնարավորությունների ընդլայնումը և կանանց ու տղամարդկանց իրավահավասարության ապահովումը ժողովուրդների հարաբերություններում քաղաքական, սոցիալական, տնտեսական, մշակութային և բնապահպանական անվտանգության հասնելու նախադրյալներն են:

42. Կանանց դրության բարելավման ոլորտում Նայրոբիի հեռանկարային ռազմավարությունների նպատակների մեծ մասը չի իրագործվել: Չնայած կառավարությունների, ինչպես նաև ոչ կառավարական կազմակերպությունների և համայն աշխարհի տղամարդկանց ու կանանց ջանքերին՝ կանանց իրավունքների ու հնարավորությունների ընդլայնման ձանապարհին նախկինի պես խոչընդոտներ գոյություն ունեն: Աշխարհի շատ շրջաններում պահպանվում են քաղաքական, տնտեսական և բնապահպանական լրջագույն ճգնաժամերը: Դրանց շարքում են հարձակողական պատերազմները, գինված հակամարտությունները, գաղութատիրությունը և օտարների տիրապետության այլ ձևերը կամ օտարերկրյա ներխուժումները, քաղաքացիական պատերազմները և ահաբեկչությունը: Այդ իրավիճակները՝ զուգակցված համակարգային կամ վիաստացի խորականությամբ, կանանց բոլոր մարդու իրավունքների ու հիմնական ազատությունների, նրանց քաղաքացիական, մշակութային, տնտեսական, քաղաքական ու սոցիալական իրավունքների խախտումներով կամ դրանք պաշտպանելու անկարողությամբ, ներառյալ նրանց զարգացման իրավունքը և կանանց ու աղջիկների նկատմամբ արմատացած կանխակալ վերաբերմունքը, ընդամենը խոչընդոտներից մի քանիսն են, որոնք ի հայտ են եկել 1985 թվականի համաշխարհային խորհրդաժողովից հետո՝ Միավորված ազգերի կազմակերպության հայտարարած կանանց տասնամյակի՝ հավասարության, զարգացման և խաղաղության ձեռքբերումները քննարկելիս և գնահատելիս:

43. Նայրոբիի խորհրդաժողովից հետո ունեցած առաջընթացի քննարկումը հնարավորություն է տալիս վեր հանելու ամենասուր հիմնախնդիրները և առավել կարևոր

**ՀԿԿԱ - ԿԱՆԱԳ ԵՎ ՌԱՍՏԱՐԴԿԱՆՑԻ ԻՐԱՎԱԿԱՎԱՍԱՐՈՒԹՅՈՒՆ, ՄԻՋԱՋՋԱՀԻՆ ԻՐԱՎԱԿԱՄ ՎԻԱՍՏՈՎՐՔԵՐԻ, ՀՀ
ՕՐԵՆՔՆԵՐԻ Կ ՕՐԵՆՄՈՐԱԿԱՆ ԱԿՈՒԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ, ԵՐՆԱՅ 2006**

ոլորտները, որոնք առաջնահերթ են միջոցների ծեռնարկման առումով: Բոլոր կողմերը պետք է իրենց ջանքերն ու ռեսուրսներն ուղղեն կարևորագույն հիմնախնդրային ոլորտների հետ կապված ռազմավարական նպատակներին հասնելուն, որոնք անխուսափելի հորեն փոխկապակցված, փոխկապված և անհետաձգելի բնույթ ունեն: Այդ կողմերը պետք է բոլոր հիմնական հիմնախնդրային ոլորտներում գործնականորեն մշակեն ու իրականացնեն հաշվետվության մեխանիզմներ:

44. Այդ նպատակներով՝ կառավարությունները, միջազգային հանրությունը և քաղաքացիական հասարակությունը, ներառյալ ոչ կառավարական կազմակերպությունները և մասնավոր սեկտորը, պետք է ռազմավարական միջոցներ ծեռնարկեն հետևյալ կարևորագույն հիմնախնդրային ոլորտներում:

գ Կանաց վրա ծանրացած աղքատության բերի պահպանումն ու մեծացումը:
գ Անհավասարությունը և անհամապատասխան հնարավորությունները կրթության և մասնագիտական պատրաստության ոլորտում և դրանց անհավասար մատչելիությունը:
գ Անհավասարությունը և անհամապատասխան հնարավորությունները առողջության պահպանման և հարակից ոլորտներում և համապատասխան ծառայությունների անհավասար մատչելիությունը:

գ Բռնությունը կանաց նկատմամբ:
գ Զինված և ուրիշ կոնֆլիկտների հետևանքները կանաց համար, մասնավորապես նրանց համար, ովքեր ապրում են օտարերկրյա օկուպացիայի պայմաններում:
գ Անհավասարությունը տնտեսական կառույցների և քաղաքականության շրջանակներում, արտադրական գործունեության բոլոր ձևերում և ռեսուրսների մատչելիության խնդրում:
գ Կանաց և տղամարդկանց անհավասարությունը իշխանության բաժանման և բոլոր մակարդակներում դիրեկտիվ որոշումների ընդունման ոլորտում:

գ Բոլոր մակարդակներում կանաց դրության բարելավման աջակցությանը կոչված մեխանիզմների անկատարությունը:
գ Կանաց մարդու իրավունքների անբավարար հարգանքը և անհամապատասխան խրախուսումը:

գ Կանաց ստերեոտիպային կերպարների ստեղծումը հաղորդակցության բոլոր համակարգերում և հատկապես զանգվածային լրատվության միջոցներում, կանաց համար դրանց մատչելիության և այդ համակարգերի գործունեությանը նրանց մասնակցության անհավասարությունը:

գ Աղջիկների նկատմամբ պահպանվող խտրականությունը և նրանց իրավունքների խախտումը:

Գլուխ IV

Ռազմավարական նպատակները և միջոցները

Կանայք և աղքատությունը

Ռազմավարական նպատակները

**ՀԿԿԱ - ԿԱՆԱՔ ԵՎ ՏՈԱՄԱՐԴԿԱՆՑ ԻՐԱՎԱԿԱՎԱՍԱՐՈՒԹՅՈՒՆ, ՄԻՋԱՋՋԱՀԻՆ ԻՐԱՎԱԿԱՄ ՎԻԱՍՏՈՎՐՔԵՐԻ, ՀՀ
ՕՐԵՆՔՆԵՐԻ Կ ՕՐԵՆՄՈՒՐԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ, ԵՐՆԱՅ 2006**

1. Զարգացման մակրոտնտեսական քաղաքականության և այնպիսի ռազմավարությունների մշակում, ընդունում և իրականացում, որոնց մեջ հաշվի են առնվում աղքատության պայմաններում ապրող կանանց պահանջմունքներն ու պայմանները:
2. Օրենքների ու վարչական ընթացակարգերի վերանայում՝ կանանց իրավունքների հավասարության ապահովման և նրանց համար տնտեսական ռեսուրսների մատչելիության ապահովման նպատակով:
3. Կանանց համար խնայողական մեխանիզմների ու հաստատությունների և վարկերի մատչելիության ապահովում:
4. Աղքատության ֆեմինացման հիմնախնդրի լուծման նպատակով գենդերային գործոնը ներառող մեթոդաբանության մշակում և հետազոտությունների անցկացում:

**Կանանց կրթությունը և մասնագիտական պատրաստությունը
Ռազմավարական նպատակները**

1. Կրության հավասար մատչելիության ապահովում:
2. Անգրագիտության վերացում կանանց շրջանում:
3. Կանանց համար մասնագիտական-տեխնիկական պատրաստության, գիտության ու տեխնիկայի ոլորտում կրթության և անընդհատ կրթության մատչելիության ընդլայնում:
4. Կրթության ու մասնագիտական կրթության անխտրական մուտեցումների մշակում:
5. Բավարար ծավալի ռեսուրսների հատկացում կրթության ոլորտում բարեփոխումներ իրականացնելու համար և դրանց իրականացման ընթացքի վերահսկողություն:
6. Աղջիկների կրթության ու մասնագիտական պատրաստության օժանդակում նրանց կյանքի ողջ ընթացքում:

**Կանայք և առողջապահությունը
Ռազմավարական նպատակները**

1. Առողջապահության ոլորտի և տեղեկատվության ու հարակից ոլորտների համապատասխան մատչելի ու բարձրորակ ծառայությունների մատչելիության ընդլայնում կանանց համար նրանց կյանքի ողջ ընթացքում:
2. Կնախարգելիչ ծրագրերի ամրապնդում՝ ուղղված կանանց առողջության ամրապնդմանը:
3. Սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդություններին, ՄԻԱՎ/ԶԻԱՀ-ին և սեռական ու վերարտադրողական առողջության հարցերին առնչվող ձեռնարկումների իրականացում՝ գենդերային գործոնների հաշվառումով:
4. Կանանց առողջության պահպանման հետազոտությունների օժանդակություն և տեղեկատվության տարածում:
5. Կանանց առողջության պահպանմանը հատկացվող ռեսուրսների ծավալի մեծացում և այդ ոլորտում գործունեության վերահսկողություն:

**Բռնություն կանանց նկատմամբ
Ռազմավարական նպատակները**

**ՀԿԿԱ - ԿԱՆԱԳ ԵՎ ՏՈԱՄԱՐԴԿԱՆՑ ԻՐԱՎԱԿԱՎԱՍԱՐՈՒԹՅՈՒՆ, ՄԻՋԱՋՋԱՀԻՆ ԻՐԱՎԱԿԱՄ ՎԻԱՍՏՈՎՐՔԵՐԻ, ՀՀ
ՕՐԵՆՔՆԵՐԻ Կ ՕՐԵՆՄՐԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԺՊՂՎԱԾՈՒ, ԵՐՆԱՅ 2006**

1. Համալիր միջոցառումներ կանանց նկատմամբ բռնության կանխարգելման և վերացման նպատակով:
2. Կանանց նկատմամբ բռնության պատճառների ու հետևանքների և կանխարգելիչ միջոցների արդյունավետության հարցերի ուսումնասիրություն:
3. Կանանց թրաֆիկինզի վերացում և օգնության ցուցաբերում այն կանանց, որոնք մարմնավաճառության ու թրաֆիկինզի հետևանքով բռնության զոհ են դառնում:

Կանայք և գինված հակամարտությունները

Ուղարկած նպատակները

1. Կանանց մասնակցության ընդլայնում կոնֆլիկտների կարգավորման գործում որոշումների ընդունման մակարդակներում և այն կանանց պաշտպանություն, որոնք գտնվուն են գինված և ուրիշ կոնֆլիկտների գոտում կամ օտարերկրյա օկուպացիայի պայմաններում:
2. Ուղարկած չափից ավելի ծախսերի կրծատում և սպառագինության առկայության հսկողություն:
3. Կոնֆլիկտների կարգավորման ոչ բռնի ձևերի քարոզչություն և կոնֆլիկտային իրավիճակներում մարդու իրավունքների խախտումների դեպքերի թվի կրծատում
4. Խաղաղության մշակույթի քարոզչության գործում կանանց ավանդի ընդլայնման օժանդակություն:
5. Պաշտպանություն, օգնություն և մասնագիտական պատրաստություն փախստական, տեղաշարժված, միջազգային պաշտպանության կարիք ունեցող և երկրի ներսում տեղաշարժված կանանց համար:
6. Օգնություն գաղութներում և չինքնակառավարվող տարածքներում գտնվող կանանց:

Կանայք և տնտեսությունը

Ուղարկած նպատակները

1. Կանանց տնտեսական իրավունքների և ինքնուրույնության խրախուսում, ներառյալ վարձու աշխատանքի մատչելիությունը, աշխատանքի պատշաճ պայմաններ և տնտեսական ռեսուրսների վերահսկողություն:
2. Ռեսուրսների, աշխատատեղերի, շուկայի և առևտրի հավասար մատչելիություն կանանց համար:
3. Ծառայությունների մատուցում բիզնեսի, մասնագիտական պատրաստության ոլորտում, ինչպես նաև ծառայություններ շուկաների, տեղեկատվության և տեխնոլոգիաների մատչելիության ապահովման համար, հատկապես ցածր եկամուտ ունեցող կանանց:
4. Կանանց տնտեսական ներուժի և առևտրային ցանցերի ամրապնդում:
5. Մասնագիտական խտրագատման և աշխատանքի տեղավորվելիս դրսերվող խտրականության բոլոր ձևերի վերացում:
6. Կանանց և տղանարդկանց աշխատանքային և ընտանեկան պարտականությունների հավասարակշռված բաշխման օժանդակություն:

Կանանց մասնակցությունը դիրեկտիվ մարմինների աշխատանքին և որոշումների կայացման գործընթացին

Ուղարկած նպատակները

**ՀԿԿԱ - ԿԱՆԱՔ ԵՎ ՏՈԱՄԱՐԴԿԱՆՑ ԻՐԱՎԱՀԱԿԱՆԱՐԴԻԹՅՈՒՆ, ՄԻՋԱՋՋԱՀԻՆ ԻՐԱՎԱԼԿԱՄ ՎԻԱՍՏՈԹՐԵՐԻ, ՀՀ
ՕՐԵՆՔՆԵՐԻ Կ ՕՐԵՆՍԴՐԱԼԿԱՆ ԱԿՍԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ, ԵՐՆԱՅ 2006**

1. Միջոցների ծեռնարկում ապահովելու կանանց համար դիրեկտիվ կառույցների և որոշումների կայացման գործընթացների հավասար մատչելիությունը և նրանց լիակատար մասնակցությունը դրանցում:
2. Կանանց՝ որոշումների կայացման գործընթացներին և կառավարման համակարգի աշխատանքին մասնակցելու հնարավորությունների ընդլայնում:

**Կանանց դրության բարելավման ինստիտուցիոնալ մեխանիզմները
Ուղղական նպատակները**

1. Ազգային մեխանիզմների և ուրիշ կառավարական մարմինների ստեղծում կամ ամրապնդում:
2. Օրենսդրությունների, պետական քաղաքականության, ծրագրերի և նախագծերի շրջանակներում գենդերային հայեցակետերի հաշվառում:
3. Սերի հատկանիշի կտրվածքով տվյալների ու տեղեկատվության հավաքում և տարածում պլանավորման և գնահատման նպատակներով:

**Կանանց մարդու իրավունքները
Ուղղական նպատակները**

1. Կանանց մարդու իրավունքների խրախուսում և պաշտպանություն մարդու իրավունքների վրաբերյալ բոլոր փաստաթղթերի, հատկապես Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիայի լիակատար իրականացման միջոցով:
2. Օրենքի համաձայն և գործնական կյանքում հավասարության և անխտրականության ապահովում:
3. Իրավաբանական գրագիտության ապահովում:

**Կանայք և զանգվածային լրատվության միջոցները
Ուղղական նպատակները**

1. Կարծիքների արտահայտմանը և զանգվածային լրատվանիջոցներում և հաղորդակցության տեխնոլոգիապես նոր միջոցներում որոշումների կայացմանն առնչվող հնարավորությունների և դրանց մատչելիության ընդլայնում կանանց համար, ինչպես նաև այդ միջոցների օգնությամբ:
2. Օժանդակություն կանանց հավասարակշռված և ոչ ստերեոտիպային կերպարի ստեղծմանը զանգվածային լրատվամիջոցներում:

**Կանայք և շրջակա միջավայրը
Ուղղական նպատակները**

**ՀԿԿԱ - ԿԱՆԱՔ ԵՎ ՏՈԱՄԱՐԴԿԱՆՑ ԻՐԱՎԱԿԱՎԱՍԱՐՈՒԹՅՈՒՆ, ՄԻՋԱՋՋԱՀԻՆ ԻՐԱՎԱԿԱՄ ՎԻԱՍՏՈՎՐՔԵՐԻ, ՀՀ
ՕՐԵՆՔՆԵՐԻ Կ ՕՐԵՆՄՐԱԿԱՆ ԱԿՍԵՐԻ ԺՊՂՎԱԾՈՒ, ԵՐՆԱՅ 2006**

- Կանանց գործուն ներգրավում բոլոր մակարդակների որոշումների կայացման մակարդակում բնապահպանական հարցերի վերաբերյալ որոշումների կայացման գործընթացում:
- Կայուն զարգացման ռազմավարություններում և ծրագրերում գեներային հիմնախնդիրների և հայեցակետերի ներառում:
- Ազգային, տարածաշրջանային և միջազգային մակարդակներում կանանց համար զարգացման և շրջակա միջավայրի ոլորտի քաղաքականության հետևանքների գնահատման մեխանիզմների ամրապնդում կամ ստեղծում:

Աղջիկներ

Ռազմավարական նպատակները

- Աղջիկների նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացում:
- Աղջիկների առնչությամբ բացասական մշակութային ավանդույթների և գործելակերպի վերացում:
- Աղջիկների իրավունքների խրախուսում և պաշտպանություն և հասարակայնության իրազեկության բարձրացում նրանց ներուժի և պահանջնունքների մասին:
- Աղջիկների նկատմամբ խտրականության վերացում կրթության, հմտությունների զարգացման և մասնագիտական պատրաստության ոլորտում:
- Աղջիկների նկատմամբ խտրականության վերացում առողջապահության և սննդի ոլորտներում:
- Երեխաների աշխատանքի տնտեսական շահագործման վերացում և աղջիկների պաշտպանություն աշխատատեղերում:
- Աղջիկների նկատմամբ բռնության վերացում:
- Աղջիկների շրջանում լուսավորական աշխատանք սոցիալական, տնտեսական և քաղաքական կյանքի հարցերի շուրջ:
- Աղջիկների դրության բարելավման գործում ընտանիքի դերի ամրապնդում: